և որ այն ևս ։ Յաջակողմն լճին անթիւ ձիթաստանք են ցմեծ տարածութիւն ։

Լիճն Նիկիոյ երկայնեալ ձգի յարևմտից յարևելս ինն ժամու գնացից . իսկ 'ի կէմլէյիկէ մինչև յեզր լճին հինգ ժամք են ։ Քաղցր է ջուր նորա և ըմպելի, զոր և վարեն յամենայն պէտս շրջակայ գիւղօրէքն . բերէ աւելի քան զքսան ազգս ձըկանց' ոչ միայն մանունց, այլ և մեծամեծաց ։ Ի հարաւային եզերս լճին աճեցեալ է ջուրն որպէս պատմեն, և ծածկեալ զշինուածս տանց, որոց որմունք մակ հաւասար երեսաց լճայատակին երևին ընդ ջրովն յորժամ խաղաղ իցէ լիճն և անալէկոծ ։ Ի նմին կողման լճին երկու ժամու հեռի 'ի Նիկիոյ, 'ի վերայ ճանապարհին յաջմէ' 'ի մեծի ապառաժին երևի արձանագիր լատին այլ խանգարեալ ։ Թէպէտ և խոր է լիճն' որպէս ասեն, սակայն դուզնաքեայ և եթ նաւակք ձկնորսաց գնան 'ի նմա ։

Պեղմունք 'ի Պոմպէա :

Այժմեան հնախոյզ հետազօտութիւնքն' որ մեծ խնամով 'ի գործ կը դրուին արդեամբ և ջանիւք զարգացեալ պետութեանց Եւրոպայ, իրաւամբք պատմական գիտութեանց ասպարէզն ընդարձակեցին նորանոր տեղեկութեանց աղբիւրներ գտնելով . և առանց երկմտութեան վերջի յիսնամեայ հետաքննութիւնքն հին պատմութեան վրայ յեղափոխութիւն մը բերին . մանաւանդ բաբելական ու եգիպտական հնութիւնք որք թանգարանաց ընդունայն զարդ մը չըլլալէն զատ' նոյն ազգաց հնութեանը վրայ գեղեցիկ արշալոյս մը ծագեցին . և կը յուսացուի' անխոնջ հնախուզից անընդհատ վաստակովք' աւելի ևս պայծառ լուսաւորութեան հասնիլ ։

Այսպիսի հետաքննական պեղում մ'ալ կ'ըլլուի նաև 'ի Պոմպէա' որ Քրիստոսի 79դ թուականին ցաւալի պատահարաւ ծածկեցաւ Վեսուվի համայնակուլ մոխրոյն տակ ։ Յամին 1755 յայտնուելով քաղքիս փլատակքն պեղմամբ, սկսաւ շարունակուիլ նոյն խուզարկութիւնը մինչև ցայսօր, ուսկից նորանոր հնութիւններ 'ի լոյս կ'ընծայուին ։ Մօտերս գտնուեցաւ ամբողջ հացագործի մը տուն' փուռին հանդերձ, որոյ երկաթեայ մեծ դռնակը կրկին ունելիքով' դեռ գոց էր ։ Դռնակը բանալով տեսեր են որ փուռը լի էր հացերով, նոյն կերպով ինչպէս որ շարուած էին եօթնևտասն դար և ութսուն և երեք տարի յառաջ ։ Այդ հացերը թուով ութսուն և երկու հատ են . իսկ չափակցութեան, ձևին ու զանգուածոյն կողմանէ, 'ի բաց առեալ ծանրութիւնն ու գոյնը, նոյն գաղափարը կու տան ինչպէս որ ելած կրնայ ըլլալ հացագործին ձեռքէն . վրանին հացագործի և կամ ուրիշ մանաւոր նշան մը չկայ . ձևերնին կլորակ է 20 հարիւրորդամէդր տրամագծով, տափակ ու մէջտեղը խոր և եզերքն ուռած ։ Իւրաքանչիւրը ութ հաւասար մասունք բաժնուած են խոր գծերով' որք մէջտեղէն դէպ 'ի եզերք կը ձգուին ։ Գունով թուխ մթնագոյն են, բայց դիւրաբեկ ։ Արդեօք խեղճ հացագործին միտքէն կրնա՞ր անցնիլ որ փուռը դրած հացերը, որոնք յաջորդ օրուան պիտոյքը պիտի ծառայէին, ութևտասն դար վերջը յայտնուին ։

Նոյն աւերակաց վրայ ուրիշ տեղ նորանշան տեսարան մ'ալ յայտնուեցաւ ։ Քանի մը գործաւորներ փոքրիկ ու աղքատին տեսքով տան մը պեղմանը վրայ աշխատելու միջոց մարդկային

ոսկերոտեաց հանդիպելով, որ սակաւագիւտ է 'ի Պոմպէա, (պատճառաւ որ ժողովրդեան մեծ մասը ժամանակ ունեցած է այն ահաւոր վտանգէն փախչելու), և աւելի հետաքննին խուզարկութեամբ պեղումը առաջ տանելով վերջապէս հինգ կմախք գտեր են, որոնց չորս հատը կին ու միւսը տղայ մըն է եղեր. բոլորն ալ տան մէջ անկիւն մը ժողովուած: Այդ կմախքներու կեցած դիրքն՝ յայտնապէս կը ցուցընեն որ տանջանքով ու վշտահար մահուամբ զրաւեր են խեղճերը: Բազուկնին իրարու կպուցած կը թուի, որ կարծես թէ ա՛լ յուսահատելով 'ի փրկութենէ՝ նոյն տեղը եկած են միատեղ մեռնելու. իսկ ծունկերու կորացեալ վիճակը յայտնի նշան մըն է իրենց վշտացը: կմախքի մ՚ ալ բերանը բոլորովին բաց է. շատ դժուարին եղած պիտի ըլլայ անտարակոյս այդ խեղճին հոգեվարքը: Տղուն կմախքը անկեան խորշն է. ո՛ գիտէ թերևս մայրական խնամքը 'ի սաստիկ սիրոյ իւր որդւոյն աւելի ապահով տեղ մը ուզեր է զետեղել զայն՝ քան թէ իր կենացը խնայել, ազատելու համար զինքը հրաբըխին նիւթէն որ տունը կ՚ողողէր: Ասոնց մօտերը գտնուեր է քսակ մ՚ ալ մէջը քսան հռովմայեցի արծաթէ դահեկան և երկու պղնձադրամ: Կը նշմարին նաև լաթեղէններու հետքեր՝ ծալքէն ճանչցուելով, որք տառապելոց զգեստներն էին անտարակոյս:

Անցք ընդ Պերեզինա[1]:

Անդէն վաղվաղակի դիմեալք 'ի կամուրջն 'ի միւս, եկին խռնեցան անդ ամենուստ ամբոխ սայլից ստուարաց, ծանրաբեռն կառաց և անօթոց պատերազմի. և հոսեալք թափով ընդ զառ 'ի վայրն անհարթ և անհաւասար 'ի մէջ չեղջաչեղջ դիականց մարդկան՝ կարթակոտոր արարին զեղկելիս զըմբռնեալսն յանդգաստից. զկնի ապա ընդ միմեանս բաղխելով բազումք այնոքիկ էին որք սաստկապէս բռնութեամբ յերկիր տապալեալք՝ սատակամահ սպանին և զորս չուրջ զնոքօք: Ցայնժամ այր այր պակուցեալք բովանդակ դասու դռոթեալ ընթանան առ աղմուկն խռովայոյզ, այլ յուզեալք և ամբոխեալք՝ թաւալագլոր խաղան, և ըստ նոցանէ 'ի չարաբաստիկ անդադար անկելոցն ջաղխեալք խորտակին:

Այսպէս խառնաղանջ ամբոխ չուառականացդ զմիմեամբք թաւալէին, դառնակսկիծ և մոլեգին կանչիւք պօղս կոծելով: Ցայն խառնուրդ ահագին ամենայն ոք կոխան և հեղձամղձուկ՝ անհնարինս ճգնէր ընդ ոտիւք ընկերին, ատամնացի և եղնգամբք պինդ կալեալ զնոսին, որք անողորմք՝ իբրև զոտնս յետս մղէին զամենեսեան: Ի զուր հարուանք և մարք ձայն տուեալ գորովալիր կոչեցին զամուսինս իւրեանց և զորդիս, զորս վայրկեան մի միայն ևս տարաւ յանջատումն անդարձ. գիրկս արկին առ նոսա, խընդրեցին տեղի հուպ մատչել առ նոսին. այլ ոչ ոք խելամուտ եղև խորհրդոց մտաց իւրեանց, և այնպէս դառնալիցք և վայրավատինք՝ անկան ընդ խաժամուժ հրոսակաւ գրոհին: Ցահեղաձայն դղրդիւն բռնաչունչ մրրկին, 'ի բոմբիւն անօթոց պատերազմականաց, 'ի չաչիւն և 'ի շառաչիւն փոթորկելոյ օդոյն և գնտակաց, և 'ի ճայթիւն ռըմբայ, 'ի մեծագոչ կառաչ հեծեծանաց և ահագնալուր երդմանց, չլինէին լսելի յունկն խազմամբոխ խուժանին պաղատանք կորուսելոցն, որոց նա եւեթ էր պատճառ:

Բարեբաստիկքն 'ի նոցունց հասին կալան զկամուրջն, այլ ոտնիոխ լեալք 'ի վերայ դէզադէզ վիրաւորաց՝ կանանց և մանկանց դիաթաւալ կխա-

1. Գետակ մըն է Եւրոպայի Ռուսաստանին մէջ, հռչակաւոր 1812ին Նաբոլէոնի աղէտալից անցքովը, Ռուսաց արշաւանքէն անյաջողութեամբ ետ դառնալուն միջոց: